ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **Հրատապ բաց մրցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

(Ա. Խաչիկյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 16.10.2019թ.
-ժամը՝ 11:00

Ընդունել ի գիտություն, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊ և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊ ընկերություններ /Կոնսորցիում/-ի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Ընդունել ի գիտություն, որ որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	Կոնսորցիում

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետը, «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ կոնսորցիումի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում /Առուվաճառքի պայմանագիր ք. Միելեց 09/07/2017 թարգմանություն լեհերենից/, որպես վաճառող կողմ նշված է՝ (Contenur ՍՊԸ), այնինչ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում կոնսորցիումի մասնակից նշված է «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊ ընկերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով առաջարկում է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել կոնսորցիումին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել կոնսորցիումի կողմից նշված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում տրամադրելու հաջորդ օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան